

Կորոնավիրուս (COVID-19)¹ հաշմանդամություն ունեցող պացիենտների այցը հիվանդանոց

Մայիս, 2018թ. – Հրապ. թիվ 7154.10 - Armenian

Որոշ բժիշկներ և հիվանդանոցներ սահմանել են COVID-19-ի պատճառով այցելուներ չընդունելու կանոն: Կալիֆորնիայի նահանգային ղեկավարությունը հիվանդանոցներին և այլ առողջապահական հաստատություններին այս կանոնների մասին գրություն¹ է ուղարկել: Գրության մեջ ասվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց երբեմն անհրաժեշտ է լինում որևէ օգնող անձ բերել իրենց հետ հիվանդանոց կամ բժշկի այցին: Գրության կրկնօրինակը ներկայացված է այս փաստաթղթի վերջում: Շարունակեք կարդալ՝ ձեր օրինական իրավունքների մասին տեղեկանալու համար:

Հավասար բուժօգնություն ապահովելու նպատակով
հաշմանդամություն ունեցող պացիենտները անհրաժեշտության
դեպքում կարող են իրենց հետ օգնող անձ ունենալ

- ✓ Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ պացիենտներ հիվանդանոցում գտնվելու ժամանակ ունեն օգնող անձի կարիք:

¹ Հանրային առողջության վարչություն, Բոլոր հաստատություններին ուղղված թիվ 20-38.1 գրություն, «Ուղեցույց այցելուների սահմանափակումների վերաբերյալ» (2-ը մայիսի, 2020թ.), հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.cdph.ca.gov/Programs/CHCQ/LCP/Pages/AFL-20-38.aspx>

- Հիվանդանոցները և բժիշկները հաշմանդամություն ունեցող *բոլոր* մարդկանց համար իրենց տարածքում պետք է կատարեն «ողջամիտ ձևափոխություններ», որոնք անհրաժեշտ են նրանց հավասար բուժօգնությունն ապահովելու համար:
- «Ողջամիտ ձևափոխությունները» այն փոփոխություններն են, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ հավասար պայմաններում գտնվելու համար: Օրինակ՝ թույլ տան, որ հիվանդանոցում ձեզ հետ օգնող անձ ունենաք:
- Օգնող անձը կարող է օգնել ձեզ տարբեր կերպ, օրինակ՝ օգնել ձեզ.
 - խոսել կամ հաղորդակցվել ուրիշների հետ
 - տեղաշարժվել ձեր սենյակում և հիվանդանոցում
 - ավելի լավ զգալ և քիչ անհանգստանալ
 - օգնել ձեզ ուտելու և մաքրության հարցերում:
- Օգնող անձ կարող է լինել ձեր անձնական ինսամատուն, ընտանիքի անդամը, ընկերը կամ այլ ինսամատու:

Օգնող անձը չի կարող հիվանդ լինել և պետք է դիմակ կրի

- ✓ Ձեզ օգնող անձը չպետք է հիվանդ լինի COVID-19-ով կամ ունենա COVID-19-ով հիվանդ լինելու որևէ նշան: Հիվանդանոցին կամ բժշկին թույլատրվում է ստուգել COVID-19 վիրուսի առկայությունը օգնող անձանց մոտ:
- ✓ Ձեզ օգնող անձը պետք է հետևի անձնական պաշտպանիչ միջոցների կանոններին: Հաճախ այն կրճատ անվանում են «ԱՊՄ» (անգլ. PPE):
 - Դիմակները և ձեռնոցները անձնական պաշտպանիչ միջոցների օրինակներ են: Ձեզ օգնող անձը պետք է կրի անձնական պաշտպանիչ միջոցներ, եթե դա պահանջեն հիվանդանոցը կամ բժիշկը:

→ Ձեզ օգնող անձը պետք է ունենա իր դիմակը և ձեռնոցները: Եթե ձեզ օգնող անձը չունի սեփական դիմակ և ձեռնոցներ, պետք է ինդրի ընդունարանից:

Հաշմանդամություն ունեցող պացիենտները կարող են, անհրաժեշտության դեպքում օգնությամբ և լրացուցիչ ժամանակի հատկացմամբ, կատարել տեսազանգեր և հեռախոսազանգեր

- ✓ Կարող եք տեսազանգեր և հեռախոսազանգեր կատարել հեռախոսների, պլանշետների կամ համակարգիչների միջոցով:
- ✓ Հեռախոս, պլանշետ կամ այլ սարք օգտագործելիս միգուցե օգնության կարիք ունենաք: Այդպիսի օգնություն կարող է լինել.

→ անձնակազմի աշխատակիցը, որը կօգնի ձեզ օգտվել հեռախոսից, պլանշետից կամ համակարգից

→ մեծ էկրանը, տեսահեռախոսը կամ ձեր հաշմանդամությանը հարմարեցված որևէ այլ բան

→ լրացուցիչ ժամանակը, որը հատկացվել է համակարգից կամ այլ սարքից օգտվելու համար, եթե դրանք հիվանդանոցի սեփականությունն են և տրամադրվել են պացիենտին օգտագործման համար:

Այցելուներին վերաբերող կանոնները պետք է հասանելի լինեն

- ✓ Հիվանդանոցները և բժիշկները ձեզ և ձեր ընտանիքին պետք է տեղեկացնեն այցելուների համար իրենց մոտ սահմանված բոլոր կանոնների մասին: Կանոնները պետք է պարունակեն տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց օգնողների մասին: Կանոններում պետք է նշվի նաև ԱՊՄ-ի, օրինակ՝ դիմակների և ձեռնոցների մասին:
- ✓ Հիվանդանոցները և բժիշկները իրենց տարածքում, շենքի վրա, ավտոկայանատեղերում և մուտքերում պետք է փակցնեն նշաններ այցելուների համար: Իրենց կանոնները նրանք պետք է հրապարակեն առցանց, Ֆեյսբուքում, Ինստագրամում և այլ

վայրերում: Նրանք պետք է համոզված լինեն, որ այդ կանոնները հասկանալի են ձեզ համար:

ՄԵՆՔ ԿՕԳՆԵՆՔ ՁԵՉ

Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ուսուցման և պաշտպանության հիմնադրամը (DREDF) կօգնեն ձեզ: Եթե դուք կամ ձեզ ծանոթ որևէ մեկը չեք կարողանում կապ հաստատել ձեզ օգնող անձի հետ կամ նշանակել այց առցանց կամ հեռախոսով, ինդրում ենք կապվել մեզ հետ:

Disability Rights California

Հեռ.՝ 1-800-776-5746

Կայք՝ <https://www.disabilityrightsca.org/>

Disability Rights Education and Defense Fund

Հեռ.՝ (510) 644-2555

Կայք՝ <https://dredf.org/>